# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Լ. Նալբանդյանը, Վ.Մկրտչյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.
Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Վասկո Դե Գամա » ՍՊԸ (ք. Երևան,Գրիբոյեդով 5/48)
2. «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ (ք. Երևան, Թումանյան 2/1)
3. «ՍՍ Թրեվլ» ՍՊԸ (ք. Երևան,Մաշտոցի 17-22)

Բ) հայտ չեն ներկայացրել հրավեր ստացած մնացած մասնակիցները:

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած ծրարի և փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 «ՍՍ Թրեվլ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարը և հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարը և հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

3.3 «Վասկո Դե Գամա» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարը համապատասխանում է, իսկ հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան, մասնավորապես սխալ է ներկայացվել Հավելված 1-ը, Հավելված 3.6-ը, Հավելված 9-ը(Հայտի ապահովումը) և Վճարման պահանջագիրը, հրավերով պահանջվում էր ներկայացնել Հավելված 3.2-ը , մասնակիցը ներկայացրել է Հավելված 3.1 –ը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | «ՍՍ Թրեվլ» ՍՊԸ | «Վասկո Դե Գամա » ՍՊԸ | «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ |
| 1 | **Ավիատոմս**<br>Երևան-Փարիզ-Վաշինգտոն-Փարիզ-Երևան<br>Յհատ էկոնոմ կարգ | 1518000 | 1765600 | 2181000 |

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

- Ղեկավարվելով Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել **«ՍՍ Թրեվլ» ՍՊԸ-ին:**
- Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել **«Վասկո Դե Գամա » ՍՊԸ-ին:**
- Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ին:**
- Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ,
- Արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը), ժամը 11:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Մ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ա. Հովսեփյան

____________ Լ. Նալբանդյան

____________ Վ.Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ.Մուրադյան